Արձանագրություն N4
ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Մ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Հայանիստ 28.06.2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Համբարձումյան
Հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Թովմասյան
Սիմոն Ղափլանյան
Սահակ Իսկանդարյան
Սոս Մկրտչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հեղինե Բաբաջանյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հանձնաժողովի նիստում քննարկվող հարցերն են՝

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Մ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ եզրակացության և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը:

2. Գնահատման արդյունքների ամփոփման վերաբերյալ

2.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Մ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցումը ներկայացվել է 20.06.2018թ.:

25.06.2018թ. ստացվել է համապատասխան եզրակացությունը:

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի և գնահատման թերթիկների արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

1. ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Մ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԿԱՐԵՆՕԻԼ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Մոսէսքո» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:
2. Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:
4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը

– Հանձնաժողովը որոշեց գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության «Մելիորացիա» ՓԲԸ-ի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ _____ Ս. Համբարձումյան

Անդամներ՝ _____ Ա. Թովմասյան

_____ Ս. Ղափլանյան

_____ Ս. Իսկանդարյան

_____ Ս. Մկրտչյան

Քարտուղար՝ _____ Հ. Բաբաջանյան